ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 602

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

18 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 67/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ԼԻԼԻԹ ԽԱՆԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 11-ի թիվ 592 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/2 հասցեի 24.0քմ հողամասում քաղ. Լիլիթ Խանբեկյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 24.0քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 2851202, տրված 14.10.2011թ./՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/2 հասցեի ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության

2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/2 հասցեի 24.0քմ հողամասում քաղ. Լիլիթ Խանբեկյանի կողմից ինքնակամ կառուցված 24.0քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:
3. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Լիլիթ Խանբեկյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 603

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

19 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 234-018, 234-019 ԵՎ 234-020 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 234-018, 234-019 և 234-020 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 167.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 234-156: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 234-156 ծածկագրով, 167.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Հակոբջանյան փողոց թիվ 94/2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 234-018, 234-019 և 234-020 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 234-156 նոր ծածկագրով, 167.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ